# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 16 | Օգոստոս | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 16 | Օգոստոս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 9193113891 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | 18 Հունվար, 2018 թ. | |
| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) | | |
| | | |
| [7.1] ՀԴՄ կտրոնի համար | | |
| | | |

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | | | |
|---|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | | |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 | |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68105919 ք/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

16/08/2019 16:19:51

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

07 օգոստոսի 2019թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ա.Գյոզալյանս, վերանայելով վարույթիս թիվ 68105919 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2019 թվականի հունիսի 28-ին, ժամը 00:02-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Մաթևոս Մաթևոսյանը, տեղեկություն ստանալով Գյումրի քաղաքի էլեկտրոպրիբորնի 9-րդ շարքի 24-րդ տան բնակչուհի Ամալյա Ալավերդյանից, այն մասին, որ ոգելից խմիչքի ազդեցության տակ վերջինիս տան պատուհանը կոտրել և նրա ընտանիքի անդամների հասցեին հայհոյանքներ ու սպառնալիքներ է հնչեցրել քրոջ նախկին ամուսինը՝ Գյումրի քաղաքի Պ.Սևակ 20-րդ շենքի 87-րդ բնակարանի բնակիչ, 24.11.1991 թվականին ծնված Ռուդիկ Արթուրի Սարգսյանը և խնդրել է օգնել: Մ.Մաթևոսյանը կատարվածի մասին ահազանգել է ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի հերթապահ օպերատիվ-խմբին և իրեն պատկանող ավտոմեքենայով գնացել է հիշյալ հասցեի մոտ, որտեղ հանդիպելով Ռ.Սարգսյանին, ի պաշտոնե ներկայացել է և փորձել պարզաբանումներ կատարել, սակայն Ռ.Սարգսյանը սկսել է բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ կատարել Ալավերդյանների հասցեին, որից հետո դեպքի վայր է եկել ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ՊՊԾ դասակի երրորդ սպայական ջոկի հրամանատար կապիտան Մանվել Թոքմաջյանը, իսկ կարճ ժամանակ անց նաև հերթապահ օպերատիվ խումբը, որի կազմում են եղել նույն բաժնի ՀՈԲ տեսուչներ Արտաշես Մուրադյանը, Միհրան Մանասյանը, նույն բաժնի ՔՀԲ ավագ օպերլիազոր Հրայր Մարտիրոսյանը, ՔՀԲ օպերլիազոր Արտուշ Պեպանյանը, ՊՊԾ դասակի ոստիկանության ենթասպա Ալբերտ Քուշքյանը, նույն դասակի վարորդ Աշոտ Հովհաննիսյանը: Ոստիկանության աշխատակիցները ներկայանալով ի պաշտոնե՝ փորձել են հանգստացնել Ռ.Սարգսյանին, կոչ են արել նրան դադարեցնել հակաօրինական գործողությունները, որոնք կարող են խանգարել հարևանությամբ բնակվողների անդորրն ու հանգիստը, սակայն Ռ.Սարգսյանը չի ենթարկվել ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, շարունակել է բղավելով սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնել նաև ոստիկանության աշխատակիցների հասցեին և դրսևորելով ագրեսիվ վարքագիծ՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող Մանվել Թոքմաջյանի նկատմամբ գործադրել է առողջության համար ոչ վտանգավոր բռնություն ՝ ոտքերով մի քանի անգամ հարվածել է նրա մարմնի տարբեր մասերին:

Դեպքի առթիվ 28.06.2019 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 68105919 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում տուժող է ճանաչվել Մանվել Թոքմաջյանը և հարցաքննվել:

01.07.2019 թվականին քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա Ռուդիկ Արթուրի Սարգսյանի նկատմամբ որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավվելու մասին: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

07.08.2019 թվականին «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ից ստացվել է Ռուդիկ Արթուրի Սարգսյանի վերաբերյալ տեղեկանք, համաձայն որի վերջինիս մոտ 25.08.2010 թվականին ախտորոշվել է «Անձի հոգեկան խանգարում պրիմիտիվ անձնավորության մոտ»:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. 68105919 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. **Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝**

ա/ Ռուդիկ Արթուրի Սարգսյանը նախկինում, իրեն մեղսագրվող արարքը կատարելիս և ներկայումս որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել, տառապում է, թե՝ ոչ, եթե այո՝ ինչպիսի և երբվանից: Իրեն մեղսագրվող հանցանքը կատարելու պահին վերջինս գտնվել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ, թե՝ ոչ:

բ/ եթե Ռ.Ա.Սարգսյանը տառապել կամ տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ կամ գտնվել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ, ապա նշված հիվանդությունը կամ խանգարումը, իրեն մեղսագրվող արարքը կատարելիս, զրկել է արդյոք նրան իր գործողությունների հանրորեն վտանգավորությունը գիտակցելու, իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակությունից: Ռ.Ա.Սարգսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

գ/ Ռ.Ա.Սարգսյանի կողմից հոգեկան հիվանդությամբ տառապելու կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ գտնվելու դեպքում կարող է արդյոք դա պատճառ հանդիսանալ իրեն մեղսագրվող արարքը կատարելու համար:

դ/ Ռ.Ա.Սարգսյանը ունակ է իրադրությունները ճիշտ ընկալել և այն վերարտադրել՝ ցուցմունքներ տալու, պատմելու կամ այլ եղանակով, մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:

ե/ Ռ.Ա.Սարգսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե՝ ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետներին խնդրվում է պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովության համար:

4. Փորձագետներին, այդպիսի պահանջ լինելու դեպքում, տրամադրել քրեական գործի նյութերը, իսկ վերջիններիս պահանջով, նախանշված օրը, փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Հայկ Մարսելի Կարապետյանը:

**Ավագ քննիչ՝** **Ա.Ա.Գյոզալյան**